


10



2638

№ 13 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱ-
ՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 13

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

Հ. ՅՈՎՍԵՓԵԱՆ

ԴԷՊԻ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԿՈՄԻՏԵ—1918

9(47)
Հ-87

2011-07

21 JAN 2006

№ 13 ԴՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱԿԱՆ ՀԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 13

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

Հ. ՅՈՎՍԵՓԻԱՆ,

ԴԷՊԻ ԲԱՂԱԲԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՍՏԱՐԻԱՏԻ

ԵՐԵՎԱՆ 1918

ԵՐԵՎԱՆ 1918



39/8

130

9(47)
Հ-87



25472-60

Մ Ո Ս Կ Ի Ա.

Տպարան Եղբ. Կ. և Ռ. ՄՈՒՐԱԴԵԱՆՆԵՐԻ

1918

ՀԱՅ ԳԵՐԻ ԶԻՆՆՈՐՆԵՐԻՆ

Դալդ բարի, երկար ու ձիգ տարիներ օտարութեան մէջ մայշւած հայ զինւոր:

Հազար ցաւ ու կրակ եւ տեսել դու, հազար դառնութիւն, * ք ու զիշեր ծնող-հարազատի կարօտ եւ քաշել հազար ու մի տրտունջ, հազար մտածմունք—եկել են ու սիրտդ մաշել: Դալդ բարի:

Եւ մեր այս ողջոյնի հետ միասին քեզ ենք ուղղում մեր խօսքը, աշխատաւոր ժողովրդի դաւակ, զիւղացու և բանւորի չաքատանջ դաւակ:

Մեր խօսքը նրա համար ենք ուղղում քեզ, որ դու աշխատաւորի զաւակ լինելով և ինքդ աշխատաւոր՝ ամենից շատ և ամենից լաւ պիտի հասկանաս մեզ—չէ՞ որ մենք Ռուսաստանի Դիւղացիական և Բանւորական խորհուրդների անունից ենք խօսում քեզ հետ, այդ խորհուրդների կողմից հաստատւած Հայկական Գործերի Կոմիսարիատի անունից:

Դալդ բարի:

ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻ

I.

«Պատերազմը սկսեցին կառավարութիւններն ու թաղաւորները, բայց պատերազմին վերջէ դնեն ժողովուրդները» — այսպէս յայտարարեցին 1914 թ. այն սոցիալիստները, որոնք հաւատարիմ էին մնայել կեղեքած ու հարստահարած աշխատաւոր մասսաների ազատագրման գաղափարին:

1914 թ. իշխող գասակարգերը՝ կապիտալիստներն ու հողատէրերը ողջ աշխարհը արիւնահեղ կռիւների տապարէզ դարձրին: Միլիոնաւոր բանւորներ ու զիւղացիներ հրացաններն ուսերին կռւի դաշտ դնային իրենց նման միլիոնաւոր բանւորների ու զիւղացիների դէմ:

Կառավարութիւնների, կապիտալիստների ու հողատէրերի բարձրացրած ազդայնական վայնառունն այնքան էր շրջրել ու լիմարացրել բանւորներին ու զիւղացիներին, որ սրանցից շատ քչերն էին հասկանում իմպերիալիստների իսկական դադառալին նպատակները:

Գիշատիչ իմպերիալիստների անամօթ ու կեղծ ազդակները ճշմարտութեան ու արդարութեան ձոտին ճնշւած ու հալածւած փօքր ազգերի ազատագրման մասի աշխատաւոր մասսաները հալած լիւղի աեղ էին ընդունում և կռւօրէն գնում եղբայրասպան պատերազմի դաշտը:

Պատերազմի հենց առաջին տարին կուռղ պե-
տութիւնների մարդկային զոհերի քանակն աւելի
էր, քան բոլոր փոքր ազգերի մարդկանց թիւը:
Բայց մարդկութիւնը ոչ միայն իր ամենաերիտա-
սարդ ու ամենաառողջ հարւածը զոհաբերեց տրնա-
խում կապիտալիստների շահերին: Աշխատաւոր
մասսաների բանւորների ու գիւղացիների արիւն-
քրանքի արդիւնք՝ անթիւ ու անհամար զիւղեր ու
քաղաքներ այսօր մոխիր ու ծուխ են դառել: Մի-
լիոնաւոր խաղաղ բնակիչներ երկրագնդի զանազան
փայրերում բնահան եղած, սովի ու մահու մատուած,
օտար ու անձանութ երկրներում ողբում են իրենց
դառն ու սև վիճակը: Հայաստանը, Լեհաստանը,
Սերբիան, Չեքոսլովակիան, Բելգիան, Բուլղարիան,
Ռումինիան—այս բոլոր մանր երկրների ժողովուրդ-
ները սրի ու հրի, սովի ու ցրախի դոհ գնացին:

Այսօր այս ժողովուրդներն իրենց կաշւի վրայ
են զգում, թէ ինչ է նշանակում և ինչ արժէք ունի
փողատէրերի ու հողատէրերի ազատարար փայնա-
սունը, նրանց յայտարարած արդարութիւնն ու
ճշմարտութիւնը: Բայց սոսկալի իմպերիալիստական
կառնածն անվերջ շարունակւել էր կարող: Ժրն-
շւած ու արնաքամ եղած ժողովուրդներ
ը պատերազմի ծանր լուծն ալլես չեն
ուզում տանել: Քալլ առ քալլ ամենուրեք
բռնկւում է յեղափոխական բմբոստացման
կրակը: Աշխատաւոր մասսաները օտքի են կան-
գնում:

Ռուսաստանի բանւորներն ու աղքատ գիւղա-
ցիները առաջինը եղան, որ յեղափոխական կարմիր
դրօշը բարձրացրին: Նիկոլայ Լ-ի արիւնոտ դահր
փշրւեց 1917 թ. փետրւարին, իսկ 1917 թ. հոկ-
տեմբերին բանւորների հերոսական ապստամբու-
թեամբ հաստատւեց աշխատաւոր մասսաների քա-
ղաքական ու տնտեսական տիրապետութիւնը՝ բան-
ւորական և գիւղացիական Խորհուրդների Իշխա-
նութիւնը:

Ռուսաստանի բանւորութիւնը և աղքատ գիւ-
ղացիութիւնը քաղաքացիական կռւի միջոցով
վերջ դրին զարաւոր կեղեքման ու շահագործման,
հողատէրերից խլեցին հողը, փողատէրե-
րից՝ փողը, Ֆաբրիկաներից ու գաւազ-
նիկներէ՝ Ֆաբրիկաներն ու գաւազներն
ու ալլ բոլորը ժողովրդի սեփականու-
թիւնն յայտարարեցին:

Ռուսաստանի ժողովուրդը ոչ միայն խօսքով,
այլ և գործով ազատագրւեց:

Նւ որովհետեւ ռուս բանւորներն ու աղքատ
գիւղացիները ոչ մի շահ չունէին պատերազմից,
այդ պատճառով նրանք ՚ի լուր աշխարհի յայտա-
րարեցին, որ ալլես չեն ուզում պատերազմել ու
հրաւիրում են բոլոր կուռղ ժողովուրդներին վեր-
ստով արիւնհեղութեանը և հաշտութիւն կնքել:

Ռուս բանւորներն ու աղքատ գիւղացիները
յանձինս Խորհրդային Իշխանութեան յայտարարեցին,
որ ոչ մի բռնի քաքականութիւն իրենք

չեն ընդունում և լիովին ազատութիւն
են տալիս Ռուսաստանի սահմաններում
ապրող բոլոր ժողովուրդներին ինքնորո-
շւելու, անօրինելու իրենց կեանքը այն-
պէս, ինչպէս որ իրենք են ցանկանում:
Խորհրդային Իշխանութիւնն այն կարծիքը յայտնեց,
որ ամեն մի ազգ կարող է մինչև անդամ բաժան-
ւել Ռուսաստանից և իր սրտին մօտ պետական
կարգեր հաստատել իր բնակութեան սահմաններում:
Խորհրդային Իշխանութիւնը շատ լաւ էր հասկա-
նում, որ բռնութեամբ չէ կարելի ազատագրել ազ-
գերին և բարեկամական կապ հաստատել նրանց
հետ: Նա քաջ համոզւած էր, որ ժողովուրդներին
իսկական եղբայրական դաշինքը կարելի
է կռել կամովին ու ազատ համաձայնու-
թեամբ միայն:

Խորհրդային Իշխանութիւնը չսխալւեց: Ին-
քորշւած Ուկրաինացի, Փինլիանդիացի
բանւորները կարճատեւ ազգայնական արբեցու-
մից չէտոյ զղատաացան և իրենց երկրներում
էլ չեղափոխական ապստամբութեան միջոցով հա-
տատեցին պրօլետարիատի (բանւորութեան)
տիրապետութիւնը: Խորհրդային Իշխա-
նութիւնը և այդպիսով իրենց բախտը կապեցին
Ռուսաստանի չեղափոխական պրօլետարիատի բախ-
տի հետ:

Ռուսական չեղափոխութիւնը գաղտնի
պայմանագրերի հրապարակութեամբ ողջ աշխարհի

առաջ մերկայեցեց կռուող պետութիւննե-
րի աւաղակային, նւաճողական ձգտում-
ները:

Ռուս բանւորներն ու աղքատ զիւղացիները
զործով ու հերոսական պայքարի օրինակով ցոյց
տւին այն ուղին, որ սանում է դէպի մարդու-
թեան վերջնական ազատագրումը ամեն աեսակի
կեղեքումից ու հարստահարումից: Այդ ուղին
բանւորների ու զիւղացիների անողոք
պայքարն է բոլոր երկրների կեղեքողնե-
րի ու հարստահարողների կապիտալիստների
ու հողատէրերի դէմ:

Ռուսական պրօլետարիական չեղափոխութիւնը
ծանր հարւած հասցրեց իմպերիալիստական պատե-
րադմին: Նա արթնացրեց ողջ աշխարհի բանւորնե-
րին և այդպիսով խախտեց այն հիմքը, որի վրայ
կանգնած էին պատերազմը վարող ունեւոր դասա-
կարգերը:

Ռուսաստանի նախկին «դաշնակիցները» Ան-
գլիան՝ Փրանսիան թշնամական դիրք բռնեցին դէ-
պի Խորհրդային Իշխանութեան խաղաղարար քաղա-
քականութիւնը: Գիշատիչ իմպերիալիստներն ուրիշ
կերպ վարւել չէին կարող, որովհետև պրօլետարիական
չեղափոխութիւնը հիմնովեր խախտեց բուրժուական
հասարակարգը, որն առաջ էր բերել համաշխարհա-
յին սոսկալի պատերազմը: Եւ ինչ Խորհրդային Իշխա-
նութեան սկզբնական շրջանում, երբ պրօլետարա-
կան ուժերը դեռ անկազմակերպ էին, եթէ ասում ենք

այն պահուն, իմպերիալիստները լուրջ իրենց թշնամական տրամադրութիւնն էին յայտնում, ապա չետադրում, երբ Խորհրդային ԽՂխանութիւնը հաստատւեց, նրանք թշնամական տրամադրութիւնն իրենց անցան իսկական թշնամական դժբաղութիւններէ պրոլետարական չեղափոխութեան դէմ:

Գերմանիան դրաւեց Ուկրաինան, Ֆինլանդիան, Կովկասն ու վերականգնեց այս երկրներում փողատէրերի ու հողատէրերի իշխանութիւնը: «Գաշնակիցները» Ռուսաստանի ծայրագաւառներում նպաստեցին հակաշեղափոխական շարժմանը և Միբիւր ու Մուրման դժբաղութիւններ սկսեցին չեղափոխական բանւորներին ու աղքատ գիւղացիներին դէմ:

Իրար հետ պատերազմող թշնամի պետութիւնները լուր համաձայնութեամբ նպատակ դրին ինչ էլ որ լինի խեղդել ռուսական պրոլետարական չեղափոխութիւնը, վերագործնել Ֆարիկաներն ու գաւոզները՝ Ֆարբրիկաններին ու գաւոզչիկներին, հողը՝ հողատէրերին, փողը՝ փողատէրերին: Որովհետեւ նրանք զոռւմ էին և հիմք ունէին սպառելու, որ Խորհրդային ԽՂխանութիւնը կտարածւի ու չեղափոխական հրդեհ կ'փռուի ուրիշ երկրներում:

Եւ այսօր փաստերը զայլս են ապացուցելու, որ իմպերիալիզմի սարսափը պրոլետարական չեղափոխութեան վտանգի հանդէպ զուր չէր:

Գերմանական իմպերիալիզմին չ'աջողւեց երկար օդաւել իր գաղանութեան արդիւնքներով: Սոցիալիզմին հաւատարիմ մնացածների համար, չեա պատերազմի սկզբից պարզ էր, որ իմպերիալիստական պատերազմը չի վերջանալ մինչև որ նա քաղաքացիական պատերազմի չ'ընկնէ: Այդ քաղաքացիական պատերազմը մշտնապէս ու կեղեքածներին՝ բանւորներին ու աղքատ գիւղացիներին պատերազմէ և հարստահարողների ու կեղերողների՝ կապիտալիստների ու հողատէրերի դէմ:

Ռուս ժողովուրդը առաջինն էր, որ տարի կանգնեց: Նրա օրինակին, թէև ոչ այնքան շուտ, հետեւեց փոքր Բուլղարիան, չետոյ Աւստրո-Հունգարիան, ապա Գերմանիան: Բուլղարիայի, Աւստրո-Հունգարիայի ու Գերմանիայի չեղափոխական պրոլետարներն ու աղքատ գիւղացիները, բորձրացնելով չեղափոխութեան, քաղաքացիական կռիւի դրօշը՝ այսօր «Գաշնակից» իմպերիալիստների երկաթէ հարւածների տակ հերոսական փորձեր են անում եղբայրական ձեռք մեկնելու Ռուսաստանի Խորհրդային ճանրուպետութեանը:

Այսօր իմպերիալիստական պատերազմն էլ գալստիւթիւն չունի: Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի ու Բուլղարիայի պրոլետար-

ներքի, տապալելով իրենց ունեւոր դասակարգերի իշխանութիւնը՝ Ռուսաստանի պրոլետարիատի հետ միասին կռիւ են սկսում անգլո-ամերիկական իմպերիալիստական բուրժուազիայի դէմ: Մարդկութեան կեանքում սկսում է նոր դարաշրջան:

Պրոլետարիատն ու աղքատ զինղայութիւնը պսօր կռում են յանուն համաշխարհային սոցիալիստական լեղափոխութեան:

Եւրոպայի զաշտերում բռնկում է համաշխարհային քաղաքացիական կռիւ հրդեհը:

Մարդկութիւնը բաժանւել է երկու անհաշաբանակներ: Բուրժուազիա և պրոլետարիատ—անապիւն երկու հակամարտ պատմական ոյժերը, որոնք պսօր մահու և կեանքի կռիւ են սկսել:

Բուրժուազիան ծերացած ու քայքայւած կապիտալիստական հասարակութեան մէջ իշխող, հարստահարող ու կեղեքող դասակարգն է: Պրոլետարիատը բուրժուական հասարակական կարգի գերեզմանափոր և ապագայ սոցիալիստական կարգեր հաստատող աշխատաւոր մարդկութեան մեծամասնութիւնն է: Կռիւն օրհասական է ու վնասական: Որոշում է ողջ մարդկութեան ճակատադիրը:

Եթէ այդ կռում չաղթող հանդիսանայ բուրժուազիան—այդ դէպքում աշխատաւոր մասսա-

ներին սպառնում է անլուր կեղեքում, շահագործում ու հալածանք: Բայց այդպէս չի լինի:

Իմպերիալիստական պատերազմն իր խաղառակ վախճանով յուլյադրեց կապիտալիստական հասարակութեան՝ ուրեմն և բուրժուազիայի լիակատար սնանկութիւնը:

Ընդհակառակը: Խորհրդային Իշխանութեան ծիսմեայ դոյութիւնը, ռուսական պրոլետարիատի ծիսմեայ սոցիալիստական շինարար դործնէութիւնը քաղաքացիական կռիւ դժւարին պայմաններում, գերմանական պրոլետարիատի հոօր պայքարը յանուն սոցիալիզմի, Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և մինչև անգամ Ամերիկայում աճող լեզափոխութիւնը՝ այս բոլորն ապացույց է, որ մարդկութեանը վիճակւած է փշրել կապիտալիզմի երկաթէ կապանքներն ու հաստատել ողջ աշխարհում սոցիալիզմի, Լեղալրութեան ու հաւասարութեան անհաղթելիութիւնը:

II.

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ է բերում հայ ժողովրդին համաշխարհային քաղաքացիական կռիւը:

Հայաստանն իր աշխարհադրական դիրքով մի ափսոսի վայր է, ուր բաղխում են մեծ, իմպերիալիստական պետութիւնների քաղաքական անանսական շահերը:

Անգլիական իմպերիալիստները մի կողմից, գերմանական իմպերիալիստները միւս — միշտ ձգտել են ողջ աշխարհը տիրելու նպատակով հաստատել իրենց քաղաքական ու անտեսական իշխանութիւնը Փորր Մսիսյուն բնդհանրապէս և չախտատանում մասնաւորապէս: Այդ է պատճառը, որ համաշխարհային պատերազմի ծագման հէնց առաջին օրից պարզ էր, որ չախտատանին վիճակած է տրիւնահեղ կռիւների ասպարէզ դառնար:

Կռուող իմպերիալիստներն իրենց զազրելի նպատակներին հասնելու համար պատրաստ էին ողջ մարդկութիւնն անդամ բնաջնջման ենթարկել:

Հայ ժողովուրդը սոսկալի աղէտների առաջ էր կանգնած: Անհրաժեշտ էր բռնկուող համաշխարհային պատերազմի շրջանում անպիտի խոհեմ քաղաքականութիւն վարել, որ կարելոյն չափ հնարաւոր լինէր թեթևացնել հայ ժողովրդին սպառնացող չարչարանքները:

Պէտք էր գիտակցել, որ իմպերիալիստական պատերազմի միջոցով հայ ժողովուրդն ազատութիւն չեւթ չի բերի:

Հայ ժողովուրդը չպէտք է մասնակցէր իմպերիալիստների պատերազմին, որովհետեւ հայկական հարցի վերջնական լուծումը, հայ ժողովրդի վերջնական ազատագրումը ոչ թէ այս կամ այն իմպերիալիզմի յաղթանակից, այլ աշխատաւոր

մասսաների քաղաքական ու տնտեսական ազատագրումից, սոցիալիստական հասարակական շարժման յաղթութիւնից է կախած: Սակայն հակադրափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը ուրիշ ճանապարհով գնաց:

Դաշնակցական բախտախնդիրները 1914 թ. դաշն կապեցին Նիկոլայ Ա-ի կառավարութեան հետ: Հայ վաշխառուների ծառայ գաշնակցականները բորբոքելով անգլիական մասսաների ազդայնական կրքերը՝ կամաւորական խմբեր կազմակերպելին ու պատերազմ յայտարարեցին տաճիկ կառավարութեանը:

Արդիւնքը՝ սոսկալի հալածանք, հարիւր հազարաւոր հայ բանւորների ու զիւղացիների դիակներ, հարիւր հազարաւոր մերկ ու քաղցած մուրացիանութեան մատնւած, մահու գոհ դարձած, անթիւ ու անհամար փախստականների շարաններ:

Սոսկալի էին հայ ժողովրդի ստացած վերքերը, անասելի հայ բանւորի ու զիւղացու տառապանքները:

Իմպերիալիստական պատերազմի ամեն մի նոր փրք, ամեն մի նոր ժամը հայ աշխատաւոր մասսաների համար նոր չարչարանքների, նոր աղէտների փր ու ժամ էր: Թւում էր, թէ հայ ժողովրդի մարտիրոսագրութեանը վերջ չկայ, թւում էր՝ հասել է հայ ժողովրդի բնաջնջման ժամը:

Սակայն 1917 թ. փետրվարեան չեղափոխու-
թիւնից չեառջ զրուծիւնը փոխւեց:

Ցարական կառավարութիւնը խորտակւեց: Հայ
Ժողովուրդը, որ դարերի ընթացքում ոչ մի
բարեկամ չէր ունեցել, հնարաւորութիւն
ստացաւ բռնել ռուս-յեղափոխական
պրոլետարիատի մեկնած ձեռքը և
նրա հետ միասին կռւել յանուն վերջ-
նական ազատագրման:

Հայ բանւորն ու զիւղացին զեթ աչս անդամ
պիտի խուսափէին ամեն մի զործակցութիւնից Ռու-
սաստանի իշխող դատակարգերի հետ: Որովհետեւ
Ռուսաստանի փոդատերերն ու հողատերերը չեղա-
փոխութեան առաջին իսկ օրից իշխանութեան
զլուխն անցնելով՝ աշխատւոյին նոր կապանքներ
ստեղծել աշխատաւոր մասսաների ու փոքր աղջե-
րի համար:

Հայ ժողովուրդը պիտի հասկանար, որ ազ-
գային ինքնորոշման իրաւունքը չի կա-
րող իրազօրծել, մինչ չխորտակւի փո-
ղատերերի ու հողատերերի իշխանու-
թիւնը:

Կերենսկու կառավարութիւնը միայն խօսքով
էր աղջերի ինքնորոշման կողմնակից, իսկ զործով
նա շարունակում էր հին ցարական կառավարու-
թեան քաղաքականութիւնը, և նպատակ էր դրել
ինչ գնով էլ լինի՝ խեղդել աշխատաւոր մասսաների
չեղափոխական շարժումը:

Հայ բանւորի ու զիւղացու նպատակը պիտի
լինէր՝ Ռուսաստանի բանւորների ու զիւղացիների
հետ միասին կռւել յանուն Բանւորական և Գիւղա-
ցիական Խորհրդների Իշխանութեան, որովհետեւ
միմիայն նա կարող էր ազատութիւն բերել հայ ժո-
ղովրդին:

Սակայն «ճակատագիրը» նոր աղէտներ էր
պատրաստել տառապեալ հայ բանւորների և զիւ-
ղացիների համար: Դաշնակցական տխմար դիւանա-
զէտները իմպերիալիստական պատերազմից ոչ մի
խրատ չէին ստացել: «Դաշնակցութիւն» կուսակ-
ցութիւնը յամառօրէն շարունակեց իր կորստաբեր
քաղաքականութիւնը: Իմպերիալիստական պատե-
րազմի ու իմպերիալիստական բուրժուազիայի դէմ
կռւելու փոխարէն «Դաշնակցութիւնը»
կատաղի պաշար մղեց. Ռուսաստանի
յեղափոխական պրոլետարիատի դէմ
յօգուտ իմպերիալիստներին չաղթա-
նակի:

Շահագործելով աղջերի ինքնորոշման իրաւուն-
քի նշանաբանը, «Դաշնակցութիւնը» ամեն ջանք
գործ դրեց մեկուսացնելու, բաժանելու հայ աշխա-
տաւոր մասսաները Ռուսաստանի չեղափոխական
պրոլետարիատից:

Իր այս նպատակին հասնելու համար «Դաշ-
նակցութիւնը» զաշն կապեց Անդրկովկասի թուրք
բեկերի կուսակցութեան՝ «Մուսաֆէթի» և Վրա-

25472-60



ստանի աշնականների հլու ծառայ մենշևիկների հետ:

«Դաշնակցութիւնը տենդային կերպով ազդա-
լին զնդեր սկսեց կազմակերպել, հակադրելով
այդ զնդերը ռուսական լեզուափոխական
բանակին:

«Դաշնակցութիւնը», ճառելով պրոլե-
տարիատի ու զուգացիութեան անունից, իրակա-
նապէս կատարի արշաւանք մղեց աշխատաւոր
մասսաների դասակարգային շահերի դէմ և իր
դաւաճան քաղաքականութեամբ օգնեց Ասրպա-
տականի հողատէրերին ճնշել գիւղա-
ցիութեան հողային շարժումը:

«Դաշնակցութեան» այդ տեսակի գործունէու-
թիւնը ցայտուն կերպով հաստատեց այն, որ այդ
կուսակցութիւնը հաշ հասարակութեան
ունենոր խաւերի՝ խոշոր ու մանր սեփա-
կանատէրերի կուսացութիւն է:

Իսկ աւելի պարզ ու աւելի որոշ «Դաշնակցու-
թեան» հակալեզուափոխական, հակաժողովրդական էու-
թիւնը երևան եկաւ հոկտեմբերեան բանւորա-դիւ-
ղացիական լեզուափոխութեան օրերից: Հոկտեմբե-
րեան լեզուափոխութեամբ Ռուսաստանում երկարա-
տե քաղաքացիական կռիւ շրջան սկսեց:

Ռուս պրոլետարները գետին գլորեցին բուրժու-
ազիային և իրենց ձեռքը վերցրին պետական իշխա-
նութիւնը: Ռուս պրոլետարիատի սոցիալիստական
գործերից մէկն այն էր, որ ճնշւած ազգերը

ազոտ ինքնորոշւելու իրաւունք ստա-
ցան, իսկ չայաստանի համար Խորհրդային
Իշխանութիւնը չատուկ հրովարտակ
հրատարակեց, որով չայտարարւում էր
չայաստանի անկախութիւնը:

Ռուսաստանի փողատէրերն ու հողատէրերը,
որ միշտ կեղեքել ու հարստահարել էին մանր ազ-
գերին և սրանց թուով չայաստանը, չէին կարող
հաշուել ստեղծւած դրութեան հետ: Նրանք նպա-
տակ դրին՝ ինչ զնով էլ որ լինի՝ խորտակել պրոլե-
տարիատի իշխանութիւնը՝ Խորհրդային Իշխանու-
թիւնը և այդպիսով վերագանդնել աշխա-
տաւոր մասսաների ու մանր ազգերի միտն
ուտելու իրաւունք: Ռուսաստանի բուրժուա-
զիան սկսեց բացարձակ հաւաքել իր ուժերը:

Ահա այստեղ հէնց «Դաշնակցութիւնը պիտի
ասէր, թէ ում հետ է նա՝ պրոլետարիատի», թէ նրա
թշնամու—բուրժուազիայի: «Դաշնակցութիւնն»
իր ոճրադորժ ձեռքն աշս անդամ էլ
բուրժուազիային մեկնեց, կռիւ չայտա-
րարեց պրոլետարիատին և նրա առաջ-
նորդ կոմմունիստական—բոլշևիկական
կուսակցութեանը:

Անդրկովկասում ստեղծեց սեփականատէ-
րերի պաշտպան դաշնակցական—մենշևիկա-
կան—մուսաֆեթական Ազգային Խոր-
հուրդներ ի երրորդութիւնը:

Դաշնակցականները մոռացան մինչև անդամ իրենց հին ատելութիւնը դէպի Անդրկովկասի թուրք բեկութիւնն ու նրանց հետ միացան բոլշեփիկները, այսինքն Ռուսաստանի բանւորները և դիւրապիւնները կառավարութեան դէմ կռուելու համար: Դաշնակցականների դեկտրութեամբ հայ փողատէրերը զինեցին և իրենց ենթարկեցին հայ դիւրապիւններին ու բանւորներին, մոռալեթականների դեկտրութեամբ թուրք բեկերը զինեցին թուրք դիւրապիւններին և բանւորներին և նրանց իրենց շահերին ծառայեցրին, իսկ վրաց մենշեփիկները դեկտրութեամբ նոյնն արին վրաց ադնականները:

1917 թ. դեկտեմբերին, 1918 թ. յունւարին, փետրւարին ու մարտին դաշնակցական-մենշեփական-մոռալեթական «երրորդութիւնը» ծրագրւած կռիւ մղեց լեղափոխական ռուս զօրքերի և բոլշեփիկների դէմ:

Անդրկովկասի երկաթուղիները, Թիֆլիզ—Բաղու գիծը ողողեց բազմաչարչար ռուս զինւորների արիւնով:

1918 թ. փետրւարի 10-ին դաշնակցական-մենշեփական-մոռալեթական Անդրկովկասեան կոմիտարիատը կրակ բացեց բոլշեփական հաղարաւոր բանւորներից ու դիւրապիւններից կազմւած ժողովի վրայ:

Իր այդպիսի քաղաքականութեամբ «Դաշնակցութիւնը» միտք ունէր կռուել ռուս պրոլետարիա-

տի դէմ, իմպերիալիստական բուրժուազիայի թուրք բեկութեան ու վրաց ադնականութեան զօրծալցութեամբ՝ և ուղղւած էր, որ հայաստանում բանւորներն ու դիւրապիւնները Խշխանութիւնը չվերցնեն իրենց ձեռքը, ինչպէս Ռուսաստանում, այլ որ այդ Խշխանութիւնն իրենց ձեռքում պահեն փողատէրերն ու հողատէրերը, որոնց հիւսիս ծառան է «Դաշնակցութիւնը»:

«Դաշնակցութիւնը» հասաւ իր նպատակին: Անդրկովկասում Խշխանութիւնը մնաց հողատէրերի ու փողատէրերի ձեռքը:

Անդրկովկասի դիւրերն ու քաղաքները կարճ ժամանակամիջոցում ազգային բնդհարումների ասպարէզ դարձան: Թուրքը ելաւ հայի դէմ, հայը՝ թուրքի դէմ: Մինչ Անդրկովկասի ժողովուրդները փոխադարձ բնդհարումներով արնաքամ էին անում իրար—վրայ հասաւ դերման-տանկական զարհուրելի արշաւանքը: Յօգնած ու տանջւած հայ բանւորներն ու դիւրապիւնները կոտորածների ու փախստականութեան զոհ զնացին:

Այդ ողբերգութիւնը պսակեց Բաղւի հայկական կոտորածով:

Սակայն «Դաշնակցութեան» ոմիրն առանց «վարձատրութեան» չմնաց:

Հայ ժողովուրդն իր տանջանքների փոխարէն ստացաւ «Դաշնակցութեան» երազած «անկախ հայ-

աստանը»։ Տաճիկ կառավարութեան «բարեհոգի» ողորմածութեամբ դաշնակցական զաւաճանները Արադածի ապառաժներէ վրայ ստեղծելին ողորմելի «Արարատեան Հանրապետութիւնը»։ Նրանք ծունկ չոքեցին Էնվեր-թալաթեան կառավարութեան առաջ և քստմնելի ժպիտներով համրոյրներ պարզեցին հայ աշխատաւոր մասսաների արիւնը ծծող տաճիկ աւատականներին։ Սակայն դէպքերը զարգանում են կայծակի արագութեամբ։

Անդլո-ամերիկական իմպերիալիզմի հարւածներէ տակ վշրւեց գերման-տաճիկական զաշնակցութիւնը։

Այսօր Անգրիզիայի ժողովուրդներէ իշխող զսակարգերը իրենց իշխանութիւնը պահպանելու համար նոր քաղաքական ուղի են բռնել։ Դաշնակցականները «Արարատեան հանրապետութեան» գոյութիւնը պահպանելու համար գերման-տաճիկական իմպերիալիզմի դրկից անդլո-ամերիկական իմպերիալիզմի դիրկն են նետուել։

«Դաշնակցութիւնը» հայ ժողովրդի համար նոր աղէտներէ հող է պատրաստում։ Նա նորից իր հայեացքը դէպի իմպերիալիզմն է ուղղել։ Այդ նշանակում է, որ Անգրիզիայի սուրբ ից ազգային կոտորածներէ ասպարէզ է դառնալու։

Այդ թող լաւ հասկանան հայ բանւորներն ու զիւղացիները։ Հայ ժողովրդի մարտիրոսադրութիւնը դէթ այս օրհասական ժամին թող արթնացնի հայ բանւորներին ու զիւղացիներին։ Նրանք թող հասկանան, որ նոր աղէտներէջ փրկելու միակ միջոցը՝ հայ ժողովրդի վերջնական ազատադրման միջոցը՝ սոցիալիստական պրոլետարիատի, համաշխարհին բանւորական ու զիւղացիական Խորհուրդներէ իշխանութեան յաղթանակն է։

Հայ բանւորներն ու զիւղացիները թող լաւ իմանան, որ այն օրը, երբ համաշխարհային իմպերիալիստները՝ փողատէրերն ու հողատէրերը չեղափոխական պրոլետարիատի դատին կնքելայանան, այն օրը, երբ բաղմաչարչար Հայաստանում կժածանւի Խորհրդային Իշխանութեան կարմիր դրօշը, այդ օրը տառապեալ հայ ժողովրդի ազատագրման օրն է լինելու։ Հայ բանւորներն ու զիւղացիները համաշխարհային պրոլետարիատի յաղթական տօնին մասնակից լինելու համար՝ այսօր, պիտի ոտքի ելնեն և կռիւ մղեն իրենց կեղեքողներէ ու հարստ հարողներէ դէմ։

Հասել է դժբախտ հայ ժողովրդի ազատութեան ժամը։ Մօտենում է այն վայրկեանը, երբ անյուր չարչարանքներէջ ազատադրւած հայ բանւորներն ու զիւղացիները դատի կհրաւիրեն իրենց զլխին

աղէտներ բերող հայ փողատէրերի ու հողատէրեր
հըռ ծառայ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը:

Հայ աշխատաւոր մասսաների
դատաւիճիւնը Դաշնակցական բախտա-
խնդիրներէ համար անողոք կլինի:

Անողոք նրա համար, որ անհա-
րադրելի ու անասելի է «Դաշնա-
կցութեան» ոճիրը խեղճ հայ ժողո-
վրդի դէմ:

Թող հայ բանւորներն ու զիւղացիներ ուրբի
ելեն:

Թող հայաստանում բռնկի յեղա-
փոխութեան կրակը:

Թող կործանուի հայ ժողովրդի վրին ծանրա-
ցած խնկերիայիզմը:

Թող հայաստանում հաստատուի
բանւորների ու զինւորների իօր-
հուրդների իշխանութիւնը:

Թող հայաստանի իօրհրդացին
իշխանութիւնը խաչատուակութեան
օեանը դամի աշխատաւոր ժողովրդի
թշնամի «Դաշնակցութիւն» կուսակ-
ցութիւնը:

Կեցցէ՛ համաշխարհային քաղա-
քացիական պատերազմը:

Կեցցէ՛ իօրհրդացին հայաստանը:

Կեցցէ՛ Սոցիալիզմը:



<< Ազգային գրադարան



NL0415191

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. **Բ. Սոց.** Ժնդ. հոգրոգրոգների Հանրապետության Սահմանադրությունը.
 2. **Ն. Լենին.** «Նամակ Ամերիկեան Բանտներին». գիրք 1 ր.
 3. **Վ. Ֆրիշե.** «Պրոլետարական պոեզիան» գիրք 2 ր.
 4. **ՆերշԱԿ.** «Դեպքերը Բագում» (Հայ Յեդ. Դաշնակցությունը և Բագի խորհրդային իշխանությունը) գիրք 75 Կ.
 5. **Զիշերին.** «ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ» (Զեկուցում խորհուրդների 5-րդ Համագումարին) գիրք 1 ր.
 6. **Ն. Լենին.** «Կարլ Մարքս» (Համառոտ կենսագրությունը և մարքսիզմի շարադրությունը) գիրք 1 ր. 50 Կ.
 7. **ՆերշԱԿ.** «Ռուսական Յեդափոխությունը և պրոլետարիատի տակտիկան» գիրք 1 ր.
 8. **ԿԱՐԼ ՌԱԴԻԿ.** I. «Գոմմունիստական Կուսակցությունը Գերմանիայում», II. «Կարլ Լեյբկներտը» (Լեյբկներտի նկարագիր) գիրք 1 ր.
 9. «Խորհրդային Կառավարության նոտան Վիլսոնին» գիրք 75 Կ.
 10. **Մ. ՊԱՆՆՈՎԻՉ** (Վելտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մեջ». գիրք 3 ր.
 11. **Հ. ՅՈՎՍԵՖԵԱՆ.** «Դեպի քաղաքացիական կռիւ».
- ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՅՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍԵՆ.**
1. **Կ. ՄԱՐԿՍ** և **Ժ. ԼԵՆԻՆ** «Գոմմունիստական Մանիֆեստը» — Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների յառաջաբաններով.
 2. **Ն. ԲՈՒԽԱՐԻՆ.** «Գոմմունիստների ծրագիրը».
 3. **Լ. ԶԻՆՈՎԵԻ,** **ԻԻ. ԿԱՄԵՆԵՒ** և **Լ. ՏՐՈՅԿ** — «Ն. Լենին».
 4. «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրությունը».
- ՊԱՏՐԱՍ ԵՆ ԵՒ ՅՈՒՏՈՎ ՄԱՍՈՒԼԻՆ ԿՅԱՆՁՆԵՆ.**
1. **Ն. ԼԵՆԻՆ.** «Իմպերիալիզմը, որպէս կապիտալիզմի վերջին էտապ».
 2. **Ն. ԼԵՆԻՆ.** «Պետություն և լեղափոխություն».
 3. **Կ. ՄԱՐԿՍ.** «Պատմական երկեր».
 4. **Կ. ԿԱՌԻՑԿԻ.** «Քրիստոնեության Ծագումը».
 5. **Կ. ԿԱՌԻՑԿԻ,** **ԷԴ. ԲԵՐՆՇՏԱՅՆ** և այլն. «Սոցիալիզմի կարապետները» (Սոցիալիզմի պատմությունը). 2 հատոր.
 6. **Ա. ԲՈԳԴԱՆՈՎ** ԵՒ **ՍՏԵՊԱՆՈՎ.** «Դասընթացք» — դարստնաւսնական.
 7. **Ա. ԲՈԳԴԱՆՈՎ.** «Համառոտ քաղաքատնտեսություն».
 8. **Կ. ԿԱՌԻՑԿԻ.** «Կ. Մարքսի տնտեսագիտական ուսուցումը».
 9. **Կ. ԿԱՌԻՑԿԻ.** «Դասակարգային շահերի հակամարտությունը 1789 թին».

2638